



ՆԱԶԵԼԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

*Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարանի
Հասարակական գիտությունների
ամբիոնի դոցենտ, իրավաբանական
գիտությունների դոկտոր*

DOI: 10.59560/18291155-2023.1-35

**ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ-ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԻ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

Ամփոփագիր

Հայ իրավագիտության ոլորտում առաջին անգամ փորձ է կատարվել գիտական բացահայտումների միջոցով սահմանազատել իրավապահ և պետական մարմինների կողմից խախտումների և իրավախախտումների նկատմամբ կիրառվող պետական հարկադրանքի իրացման գործընթացների ճյուղային առանձնահատկությունները:

Հոդվածում սահմանազատված են «վարույթ», «գործընթաց», «արարողակարգ» եզրույթները, որոնք գործնականում կյանքի են կոչվում ինչպես խախտումների, այնպես էլ իրավախախտումների կարգավորման նպատակով:

Որպես առանձնահատկություն գիտական հրապարակման մեջ ուշադրության կենտրոնում է կառավարման ոլորտներից հատկապես պետության ֆինանսական գործունեության մեջ ֆինանսական համակարգի տարբեր բնագավառներում արձանագրված ֆինանսական կարգապահության խախտումների նկատմամբ կիրառվող ֆինանսական հարկադրանքը, որի տեսակների և հարկադրանքի միջոցների իրավագիտական բացահայտումները լուսաբանված են հեղինակի առանձին գիտահետազոտական աշխատանքներում և նրա հեղինակած ուսումնական ձեռնարկներում՝ ֆինանսական, բանկային, մաքսային, հարկային, ինչպես նաև «Ֆինանսաիրավական պատասխանատվություն» վերտառությամբ մենագրությունում:

1(109)2023
◆ ՍԵՂՈՒԿԱՆ ԳԵՂՈՒԿԱՆ ՂԱՏԱՐՎԱՆ
◆ 35

Հիմնաբառեր. արձանագրային, արարողակարգ, գործընթաց, վարույթ, արտադրողական, հարկադրանքի միջոցներ, մեղք, հանրային վտանգավորություն:

Իրավագիտությունը չի կարող անտարբերությամբ ընկալել այն նոր տերմինաբանական գոյացությունները, որոնք հասարակական կեցության գիտատեխնիկական առաջընթացին համահունչ թելադրում են իրավական գիտություններին և ճանապարհի հարթում նոր իրավական կատեգորիաների և առանձին իրավական ինստիտուտների նորագույն իրավական տերմինաբանության համալրմանը, որոնք իրենց զգացնել են տալիս հատկապես իրավունքի նյութական նորմերի պահանջները գործնականում վարույթային եղանակներով կյանքի կոչելիս:

Նոր իրավական կատեգորիաների, տերմինների հասկացության ձևավորման, դրանց ընկալման, ճանաչողության նպատակներով վերջիններիս տեսական բացահայտումները կարծում ենք անհրաժեշտություն են ազգային իրավագիտության նվաճումները մայրենի լեզվում սեփականաշնորհելու և իրավագիտության հարուստ նվաճված դրույթները բազմապատկելու համար:

Գիտական հոդվածի ներկայացված վերտառությունը հեռու է լեզվաբանական նորույթի հասկացությունից, այն առօրյա կիրառական եզրույթ է:

Նպատակը հիշատակված նորույթի գործածական շրջանակների ընդլայնումն է իրավունքի մի շարք այնպիսի ճյուղերում, ինչպիսիք են քաղաքացիական, ֆինանսական, հարկային, մաքսային, բյուջետային, բանկային իրավունքի ճյուղերը, որոնց ներհատուկ է ցանկացած խախտման դեպքում պետական հարկադրանքի կիրառումը:

Արձանագրային «արարողակարգ» (процедура) եզրույթը լայնորեն կիրառվում է արտասահմանյան մի շարք երկրների վարչական, հարկային, ֆինանսական իրավունքի ճյուղերում (ՌԴ, ԱՄՆ, Ֆրանսիա) և այլ պետություններում¹:

¹ Ст'у մանրամասն, Юридический энциклопедический словарь, Протокол об административном правонарушении. - М.: "Советская энциклопедия", 1987, էջ 392-394; Большой юридический словарь / Под ред. А.Я. Сухарева, В.Е. Крутских. - М., էջ 2002; **Белоусов А.В.** Процедуры разрешения налоговых споров по законодательству США / Под ред. доктора юрид. наук, профессора А.Н. Козырина). - М.: Юриспруденция, 2008, էջ 84-

Նկատենք, որ «արարողակարգ» եզրույթը սակավ կամ գրեթե չի գործածվում իրավագիտության մեջ: Այն, ըստ էության, պետք է սահմանազատել «վարույթ» (производство), «գործընթաց» (процесс) եզրույթներից:

Իրավագիտության մեջ առանձին իրավունքի ճյուղերում՝ քրեական, վարչական, ֆինանսական, գիտականորեն մշակվել են և համանուն իրավունքի ճյուղերի օրենսդրություններում կիրառվում են հիշատակված եզրույթները: Բոլոր դեպքերում այս հասկացությունները մեծամասամբ հանգում են հակաիրավական, ոչ օրինաչափ գործողությունների կամ անգործության հետևանքով խախտված իրավական նորմի պահանջների վերականգնմանը կամ անհնարինության դեպքում՝ իրավական սանկցիաների կիրառմանը, որպես խախտման իրավաբանական պատասխանատվություն, որը կյանքի է կոչվում որոշակի իրավական գործողությունների տրամաբանական միջոցների գործադրմամբ, որը, ըստ էության, նախապատրաստվող կամ արդեն վրա հասած հակաօրինական գործողությունների դեմ իրավական ներգործության նպատակով, երևույթի օբյեկտիվ և ամբողջական բացահայտումն է, որն իրականացվում է միմյանց հաջորդող որոշակի գործողությունների շղթայով: Օրինակ, բյուջետային իրավունքում կառավարման ոլորտի որևէ օրենսդրական հասցեագրման պահանջի խախտում, շրջանցումով, որի համար գործի են դրվում ասենք ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի ելակետային այնպիսի դրույթներ, ինչպիսիք են՝ վարչական ակտի-արձանագրության ընդունումը, վարչական վարույթի հարուցումը և հաջորդական փուլերը, որոնք՝ որպես վարույթի պարտադիր պահանջ, վրա են հասնում հիշատակված օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կարգով:

Դժվար չէ նկատել, որ վարչական, քրեական կամ թեկուզ աշխատանքային իրավունքում կարգապահական վարույթը գործադրվում է՝ հիմքում ունենալով պարտադիր «իրավախախտման փաստը»: Հիշատակված իրավունքի ճյուղերում ակնհայտ և **ընկալելի է իրավախախտումը**, որի կապակցությամբ կազմվել է վարչական ակտը կամ քրեական իրավունքում հարուցվել է քրեական գործ:

85; **Morgan, Patricia T.**, *Tax procedure and Tax Fraud in a Nutshell*. 2nd ed, St. Paul, MN. 1999, West Group, էջ 52:

Այս բացահայտումները վկայում են «վարույթ» եզրույթի իրավաբանական հիմնավորումները, առավել ևս եթե վկայակոչենք «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 19-րդ հոդվածը, ըստ որի, վարչական վարույթի հասկացությունը լուսաբանվում է որպես «վարչական ակտ ընդունելուն ուղղված գործողություն», իսկ հաջորդ՝ 20-րդ հոդվածն ամբողջական է դարձնում վարույթի բովանդակությունը, քանի որ վարույթը միայն վարչական ակտի ընդունումը չէ, այլ, ինչպես նշվում է հաջորդ հոդվածում, բաղկացած է միմյանց փոխկապակցված վարույթի հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերից:

Այսպիսի բնութագրերով անհնար է լուսաբանել և բավարար լուծումներ տալ ֆինանսական իրավունքի ոլորտում, հատկապես ֆինանսական հարկադրանքի (ներգործության) այնպիսի միջոցների կիրառմանը, ինչպիսիք են ֆինանսական «նախազգուշական», «կանխարգելիչ» և «խափանման» միջոցները, **որոնք վրա են հասնում առանց ֆինանսաիրավական նորմերի պահանջների խախտման**, որոնց կապակցությամբ պետական մարմիններում կիրառվող գործընթացներն ունեն «արարողակարգային» բնույթ այն պատճառով, որ վերջիններս սահմանազատվում են ինչպես վարչական, այնպես էլ ֆինանսաիրավական խախտումներից, որոնք ունեն հասարակական մեծ վտանգավորություն, մեծամասամբ ֆինանսական գործունեության ոլորտում, դրսևորվում են առանց իրավախախտման, որպես գործնական շեղումներ, որոնք չեն բնութագրվում որպես ֆինանսաիրավական խախտումներ և սահմանված չեն ֆինանսաիրավական նորմերով:

«Արարողակարգ» եզրույթի կառուցվածքի, փուլերի, իրավական բովանդակության առանձնահատկությունների կապակցությամբ իրավաբանական գրականության մեջ բավարար բացահայտումների բացակայությունը հրամայական է դարձնում հիշատակված իրավական կատեգորիայի իրավագիտական բացահայտումների խնդիրը:

Կարծում ենք՝ գիտական բացահայտումներին մեծապես կարող են օգնել իրավունքի տարբեր ճյուղեր, հատկապես քրեական և վարչական իրավունքի գիտությունների կողմից «մեղքի», նրա ձևերի, հանցագործության և զանցանքի, վերջիններիս լուսաբանումներին ուղղված գիտական պարզաբանումները:

Այսպես, քրեագիտության ոլորտում մեղքի դրսևորման ձևերից է հանցագործությունը, որի հասկացությունը տրվում է վերջինիս հատկանիշների միջոցով: ՀՀ քրեական օրենսգրքում տրված հասկացություններից երևում է, որ հանցագործության հատկանիշներն ունեն երեք տարր.

- ա) հանցագործությունը հանրության համար վտանգավոր արարքն է,
- բ) հանցագործությունը քրեական օրենքով արգելված արարքն է,
- գ) հանցագործությունը մեղավորությամբ կատարված արարքն է:

Անդրադառնանք հանրային վտանգավորությանը. նկատենք, որ վերջինս հանցագործության նյութական հատկանիշ է: Այդ արարքը հակասում է հասարակության կյանքի գոյության պայմաններին, խախտում է հասարակության կենսագործունեության համար անհրաժեշտ հասարակական հարաբերությունները:

Հանրային վտանգավորության բնույթը որոշվում է այն հասարակական հարաբերությունների բնույթով, որոնց դեմ ոտնձգում է հանցագործը: Այլ խոսքով՝ նկատի ունենք հանցագործության օբյեկտը:

Նկատենք, որ հասարակական վտանգավորության այս սահմանները հավաստիորեն արժեքավոր են իրավունքի բոլոր ճյուղերի համար: Հանրային վտանգավորության աստիճանը՝ որպես հանրային վտանգավորության քանակական արտահայտություն, որոշվում է բազմաթիվ չափանիշներով:

Հանրային վտանգավորության աստիճանը բնութագրող հիմնական ցուցանիշը պետության ֆինանսական գործունեության ոլորտում այն վնասն է, որը հասցվում է հանցագործության հետևանքով (բյուջետային, հարկային, մաքսային և բանկային) գործառույթներ իրականացնելիս: Ֆինանսաիրավական ակտերում այդ վնասը ձևակերպվում է նյութական բնույթի: ՀՀ ֆինանսական համակարգին պատճառած վնասի բնույթն ու չափը հիմք են հանդիսանում հանցագործության վտանգավորության աստիճանը որոշելու համար:

Պետության ֆինանսական գործունեության ոլորտում շատ արարքներ վտանգավոր են համարվում գործողությունը կամ անգործությունը իրականացնելու պահից՝ անկախ նրանից՝ դրանք վտանգավոր հետևանքներ առաջացրել են, թե՞ ոչ: Այդպիսի հանցագործությունների վտանգավորությունը դրսևորվում է նրանում, որ գործողության կամ անգործության փաստն իսկ սպառնալիք է ստեղծում օրենքով սահմանված պետական և հասարակական հարաբերությունների համար:

Հանրային վտանգավորության աստիճանը բնութագրվում է նաև դրսևորված մեղքի ձևով: Առավել մեծ վտանգավորություն են ներկայացնում դիտավորությամբ կատարվող արարքները, քան անզգուշությամբ կատարվողները:

Հանրային վտանգավորությունը իրավախախտման կարևորագույն բնութագրական հատկանիշներից է: Ֆինանսաիրավական չեն կարող համարվել այն արարքները, որոնք օժտված չեն վտանգավորությամբ, չնայած վտանգավորության աստիճանն այլ իրավախախտումները և հանցագործությունները միմյանցից սահմանազատող կարևորագույն չափանիշ է, հատկապես, երբ իրավախախտումը և հանցագործությունն ուղղված են միևնույն օբյեկտի դեմ և արտաքին այլ հատկանիշներով նման են իրար: Այս դեպքերում հանցագործությունն այլ իրավախախտումներից տարբերակող հիմնական չափանիշը վտանգավորության աստիճանն է:

Ժամանակակից իրավագիտության մեջ անհրաժեշտություն է առաջանում քննարկել հաճախակի վեճերի տեղիք տվող այն հարցը, թե խախտումները կամ իրավախախտումներն օժտված են հանրային վտանգավորությամբ:

Քրեագիտության մեջ որոշ իրավագետներ գտնում են, որ հանրային վտանգավորությունը հատուկ է միայն հանցագործությանը: Աննշան խախտումները, որ հետապնդվում են ֆինանսական, հարկային, մաքսային, բանկային գործունեության մեջ, չեն խախտում հասարակական հարաբերությունների ողջ համակարգը և այդ պատճառով չեն կարող հանրորեն վտանգավոր համարվել: Հանրային վտանգավորությունը, ըստ այդ հեղինակների, այնպիսի իրավախախտման հատկություն է, որն էական վնաս է պատճառում կամ այդպիսի վնաս պատճառելու սպառնալիք է ստեղծում¹:

Այսօր, իրավունքի տեսության մեջ գերակշռող կարծիքն այն է, որ հանրային վտանգավորությունը հատուկ է բոլոր իրավախախտումներին²: Այս տեսակետի կողմնակիցներն իրենց դիրքորոշումը հիմնավորում են հետևյալ փաստարկներով:

Այսպես, իրավունքի, որպես հասարակական հարաբերությունների կարգավորչի էությունն այն է, որ այն կարող է կիրառվել միայն հանրորեն նշանակալից երևույթների նկատմամբ: Որքան էլ այս կամ այն երևույթն առաջին հայացքից աննշան լինի, քանի որ այն արգելվում է իրավունքով,

¹ Տե՛ս **Марцев А.И.** Диалектика и вопросы теории уголовного права. - Красноярск, 1990, էջ 30:

² Տե՛ս, օրինակ, **Ляпунов Ю.И.** Общественная опасность деяния как универсальная категория советского уголовного права. - М., 1989:

ուստի որոշակի վտանգ է ներկայացնում հասարակության և պետության համար: Գործնականում որոշակի արարքներն իրավախախտում են ճանաչվում այն պատճառով, որ դրանք որոշակի վտանգ են ներկայացնում և կարող են վնաս հասցնել հասարակական հարաբերություններին: Այդ արարքների համար պատասխանատվության սահմանումը բխում է դրանք ի ցույց դնելու անհրաժեշտությունից: Հնարավոր չէ պատասխանատվություն սահմանել այնպիսի արարքների համար, որոնք ոչ մի վտանգ չեն ներկայացնում և պարսավանքի արժանի չեն: **Այս դեպքերում աջակցության է գալիս իրավական արարողակարգը**, որի առանձին փուլերի քննարկումները, որոնք ուղղված են նկատված իրավախախտումների վերացմանը, չեզոքացնում են արարքի հակաիրավական բնույթը և նախազգուշացնում գործողության կամ անգործության անթույլատրելիությունը:

Այսպիսի դիրքորոշումը նպաստում է ֆինանսական խախտումների արարողակարգի գործադրմամբ հանրային վտանգավորության և հանրային վնասակարության հետևանքների հետազոտմանը:

Իրավագետների տեսական դիրքորոշումների վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնել, որ հանցագործությունը և մյուս իրավախախտումները միմյանցից տարբերվում են հանրային վտանգավորության աստիճանով¹:

Հիշատակված տեսական դրույթներն իրենց օրենսդրական սահման են գտել Քրեական օրենսգրքի 18 հոդվածի երկրորդ մասի ձևակերպումը, ըստ որի «Հանցագործություն չի համարվում այն գործողությունը կամ անգործությունը, որը թեև ձևականորեն պարունակում է սույն օրենսգրքով նախատեսված որևէ արարքի հատկանիշներ, սակայն հանցագործության համեմատ ունի նվազ վտանգավորություն»: Նման ձևակերպումից պարզ էր դառնում, որ խոսքը վերաբերում է ոչ թե ընդհանրապես հանրային վտանգավորության բացակայությանը, այլ հանցագործության համեմատ ավելի ցածր վտանգավորությանը:

Արարքի նվազ կարևորությունն իրավական այն բանալին է, որի շնորհիվ հնարավորություն է ընձեռնվում բացահայտել «արարողակարգ» եզրույթի իրավական բովանդակությունը պետության ֆինանսական գոր-

¹ Տե՛ս մանրամասն, **Лейст О.Э.** Санкции и ответственность по советскому праву. - МГУ, 1981, էջ 50; **Самощен И.С.** Понятие правонарушения по советскому законодательству, 1963, էջ 51-64:

ծունեության ոլորտում հայտնաբերված ցանկացած խախտման արժևորման և իրավական գնահատման համար:

Ֆինանսաիրավական գրականության մեջ որպես այդպիսի չափանիշներ նշվում են պատճառված վնասի աննշան չափը, իրավախախտման կատարման մեջ անձի երկրորդական դերը:

Հետևաբար, հանրային վտանգավորությունը՝ որպես իրավախախտման նյութական հատկանիշ, բավարար չէ արարքը խախտում ճանաչելու համար: Անհրաժեշտ է նաև մեկ այլ հատկանիշի՝ խախտման որպես գործողության հակաիրավականությունը:

Ֆինանսական (բյուջետային, հարկային, մաքսային, բանկային) իրավունքի ճյուղերում անկախ վտանգավորության աստիճանից և այն հանգամանքից՝ նախատեսված է ֆինանսաիրավական ակտերով, թե՛ ոչ, ենթակա է պատասխանատվության, որի կապակցությամբ սկսվում է «արձանագրային» գործընթաց:

Արձանագրային գործընթացի որոշման գնահատման համար կարևոր է, որ խախտումը կատարված լինի «մեղավորությամբ»:

Սակայն, ինչպես նշել ենք, մեղքը չի կարող խախտման ինքնուրույն հատկանիշ լինել: Այն ֆինանսական խախտման հակաիրավականության բաղկացուցիչ մասն է:

Իրավագիտության մեջ մեղքն անձի հոգեբանական վերաբերմունքն է իր կատարած արարքի և դրա հետևանքների նկատմամբ և դրսևորվում է դիտավորության կամ անզգուշության ձևով, արարքի այն ներքին էությունն ու բովանդակությունն է, որը դրա արտաքին դրսևորման հետ միասնության մեջ տալիս է խախտում¹:

Ֆինանսական խախտման պատժելիության հիմնախնդիրը ըստ իրավախախտման հատկանիշի տեսական գրականության մեջ մինչև այժմ էլ տեղիք է տալիս տարաբնույթ վեճերի:

Իրավագիտության մեջ մի շարք հեղինակներ այն կարծիքին են, որ պատժելիությունը չի կարող հակազդման հատկանիշ լինել: Նրանց հիմնական փաստարկը հանգում է այն բանին, որ օրենքը նախատեսում է իրավախախտում կատարած անձին պատժից, նույնիսկ պատասխանատվությունից ազատելու բազմաթիվ հիմքեր: Այդ դեպքերում խախտումն

¹ Տե՛ս մանրամասն, **Пионтковский А.А.** Учение о преступности. - М., 1961, էջ 100-105:

առկա է, բայց պատիժը բացակայում է: Ուրեմն պատժելիությունը չի կարող խախտման հատկանիշ համարվել:

Առանց պատժի իրավական ակտի խախտման գոյության գաղափարը քննադատության արժանացավ իրավագետների մեծ մասի կողմից: Կարծում ենք՝ իրական պատժելիությունը՝ որպես կատարած խախտման իրավական հետևանք, իրոք չի կարող խախտման հատկանիշ համարվել:

Պատահական չէ, որ իրավագետների հետագա գիտական մշակումների արդյունքների հիման վրա մի շարք իրավական ակտերի բովանդակությունը համալրեցին **առանց մեղքի պետական հարկադրանք կիրառելու հետ**: Նման դեպքերում իրավունքի մի շարք ճյուղերում առաջնային պլան է մղվում արարքի հասարակական վտանգավորությունը, որը բավարար հիմք է «արձանագրային-արարողակարգային» գործընթաց սկսելու համար:

Իրավագիտական այս նոր հայեցակարգի կիրառման գործնական հիմքերը պարզորոշ դարձնելու նպատակով մատնացույց անենք թեկուզ ՀՀ քրեական օրենսդրությունը: Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 31-րդ հոդվածը սահմանում է «առանց մեղքի վնաս պատճառելը»: Այլ խոսքով՝ խախտումը (արարքը) համարվում է առանց մեղքի կատարված, եթե անձը չի գիտակցել և տվյալ իրադրությունում չէր կարող գիտակցել իր գործողության կամ անգործության հանրության համար վտանգավոր բնույթը կամ չի նախատեսել հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը տվյալ իրադրությունում պարտավոր չէր կամ չէր կարող նախատեսել դրանք:

Նույն հոդվածի երկրորդ մասում խախտումը համարվում է առանց մեղքի կատարված նաև այն դեպքում, եթե անձը նախատեսել է իր գործողության (անգործության) հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, չի ցանկացել դրանց առաջացումը, բայց ծայրահեղ պայմաններում կամ նյարդահոգեկան ծանրաբեռնվածությունն իր հոգեֆիզիոլոգիական հատկությունների անհամապատասխանության հետևանքով չէր կարող կանխել դրանց առաջացումը:

Պատժողական իրավունքի ճյուղերի (քրեական, վարչական) խախտման և իրավախախտման բովանդակային վերլուծությունները, իրավունքի այս ճյուղերի իրավախախտման և պատասխանատվության կիրառման հիմքերի բացահայտումները հուշում են, որ բոլորովին

արդյունավետ չէ ժամանակակից իրավագիտության մեջ իրավաբանական պատասխանատվության հիմք համարել «մեղքը», քանի որ հասարակական հարաբերությունների զարգացման անկանխատեսելի թռիչքները հավաստում են, որ իրավական ակտերի պահանջների խախտումների վերականգնման անհրաժեշտությունն այսօր բխում է արարքի (խախտման) հասարակության անվտանգության պահանջից:

Ժողովրդավարական բոլոր պետություններն իրենց քաղաքացիներին որոշակի պահանջներ են ներկայացնում, որոնց խախտումը հանգեցնում է պատասխանատվության: Օրենքով սահմանված պահանջի խախտման հետ կապված կարող է սահմանվել բարոյական կամ իրավական պատասխանատվություն: Իրավագիտության մեջ պատասխանատվությունը բնորոշվում է որպես անբարենպաստ հետևանքներ, որոնք առաջ են գալիս իրավունքի և բարոյականության տեսանկյունից պարսավելի արարք կատարած անձի համար:

Ֆինանսական գործունեության ոլորտում հասարակության պահանջների խախտումների քննարկումները կարող են ընթանալ արձանագրումների, լուսմների, քննարկումների, բացատրությունների միջոցով, որոնց իրավական գնահատականների գործնական արդյունքները կարող են թափանցիկ և հրապարակային բնույթ հաղորդել արձանագրային-արարողակարգային գործընթացների կազմակերպման իրավական միջոցառումներին, որոնք առանձին վերցված իրավական վերլուծությունների համակարգման կարիք ունեն: Այլ խոսքով՝ բյուջետային, հարկային, մաքսային, բանկային և ֆինանսական համակարգի այլ օղակներում հայտնաբերված խախտումները, անկախ հասարակական վտանգավորության աստիճանից և «մեղքի» բացակայությունից, պահանջում են ձեռնարկել «արձանագրային-արարողակարգային» գործընթացներ, հատկապես օրենսդրությամբ սահմանված՝ «վարույթին» ներհատուկ փուլերի տրամաբանական հաջորդականությամբ, որն էլ ֆինանսական իրավունքի թե՛ ճյուղի և թե՛ օրենսդրության կատարելագործման և նոր «արձանագրային» (արարողակարգային) հայեցակարգերի մշակման և իրավական բացահայտումների կարիք ունի:

«Նոր իրավունքի համակարգի գործընթացային (վարույթ, դատավարություն) ճյուղերի «վարույթի» իրավական կարգավորումների բացահայտումները բերում են այն եզրակացության, որ իրավահամեմատական

մեթոդների կիրառմամբ, հողվածում փորձ է կատարվում հիմնավորել և վարույթ ու դատավարությունից սահմանազատել «արձանագրային» արարողակարգային գործընթացների իրավական առանձնահատկություններ, որը կնպաստի ժամանակակից ֆինանսական իրավախախտումների և կոռուպցիայի դեմ մղվող պայքարի արդյունավետության բարձրացմանը:

Արձանագրային-արարողակարգային գործընթացների իրավական բովանդակությունը լուսաբանվում է վարույթային ճյուղերին ներհատուկ սկզբունքների, փուլերի, ինչպես նաև իրավունքի աղբյուրների բացահայտումով:

Պետության ֆինանսական գործունեության հասարակական կյանքի ցանկացած ոլորտում արձանագրային արարողակարգերի ներդրումը կպահանջի ապագայում լրացման նպատակով վերանայել ՀՀ «Քրեական դատավարության» օրենսգրքի 26, ՀՀ «Քաղաքացիական դատավարության» օրենսգրքի 12, 22-րդ, 23-րդ գլուխները, ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքի 13-րդ, 16-րդ գլուխները, ինչպես նաև ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքը՝ վերջիններս համալրելով արձանագրային-արարողակարգային գործընթացներին ներհատուկ սկզբունքներով:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 2015 թ., դեկտեմբերի 6-ի հանրաքվեի փոփոխություններով:
2. ՀՀ քրեական օրենսգիրք (ընդունված 2003 թ. ապրիլի 18-ին):
3. ՀՀ քրեական օրենսգիրք (ընդունված 2021 թ. մայիսի 5-ին):
4. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք (ընդունված 1998 թ. հուլիսի 1-ին):
5. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք (ընդունված 2021 թ. հունիսի 30-ին):
6. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք (ընդունված է ՀՀ ԱԺ-ի կողմից 2013 թ.) (2023 թ. փոփոխություններով):
7. ՀՀ օրենքը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» (ընդունված է 2004 թ. մարտի 16-ին):
8. Юридический энциклопедический словарь, Протокол об административном правонарушении. - М.: “Советская энциклопедия”,

1987; Большой юридический словарь / Под ред. А.Я. Сухарева, В.Е. Крутских. - М.; **Белоусов А.В.** Процедуры разрешения налоговых споров по законодательству США / Под ред. доктора юрид. наук, профессора А.Н. Козырина). - М.: Юриспруденция, 2008; **Morgan, Patricia T.**, Tax procedure and *Tax Fraud* in a *Nutshell*. 2nd ed, St. Paul, MN. 1999, West Group.

9. **Марцев А.И.** Диалектика и вопросы теории уголовного права. - Красноярск, 1990.

10. **Ляпунов Ю.И.** Общественная опасность деяния как универсальная категория советского уголовного права. - М., 1989.

11. **Лейст О.Э.** Санкции и ответственность по советскому праву. - МГУ, 1981.

12. **Самоцен И.С.** Понятие правонарушения по советскому законодательству. - М., 1963.

13. **Пионтковский А.А.** Учение о преступности. - М., 1961.

ПРАВОВЫЕ ОСОБЕННОСТИ ПРОТОКОЛЬНО- ПРОЦЕДУРНЫХ ПРОЦЕССОВ В СФЕРЕ ФИНАНСОВОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ГОСУДАРСТВА

Аннотация

В статье впервые в армянской юриспруденции предпринята попытка разграничения отраслевых особенностей процессов осуществления государственного принуждения, применяемого правоохранительными и государственными органами в отношении нарушений и правонарушений. В статье разграничены термины “производство”, “процесс”, “процедура”, которые на практике используются в целях регулирования как нарушений, так и правонарушений.

Особое внимание в научной публикации уделяется финансовому принуждению, применяемому к нарушениям финансовой дисциплины, зафиксированным в различных сферах финансовой деятельности, и особенно в сфере финансовой деятельности государства. Юридические выводы относительно видов и способов финансового принуждения освещены в некоторых научно-исследовательских работах и учебных пособиях автора,

которые обобщены в авторской монографии “Финансово-правовая ответственность”, затрагивающей такие сферы деятельности, как финансовую, банковскую, таможенную и налоговую.

Ключевые слова: протокольный, протокол, процесс, производство, производственный, меры принуждения, вина, общественная опасность.

LEGAL FEATURES OF PROTOCOL-PROCEDURAL PROCESSES IN THE SPHERE OF STATE FINANCIAL ACTIVITY

Annotation

In the article, for the first time in the Armenian jurisprudence, an attempt was made to distinguish between the sectoral features of the processes of implementing State coercion applied by law enforcement and State agencies in relation to violations and offenses.

The article distinguishes between the terms “proceeding”, “process”, and “procedure”, which are used in practice to regulate both violations and offenses.

In this scientific publication, particular attention is paid to financial coercion, as a feature, applied to violations of financial discipline observed in various areas of financial activity of the State, especially in the field of management of the financial activities. Legal conclusions regarding the types and methods of financial coercion are covered in some research papers and textbooks of the author, which are summarized in the author’s monograph titled “Financial and Legal Responsibility” that also refers to financial, banking, customs and tax sectors.

Keywords: protocol, process, proceeding, productive, coercive measures, guilt, public danger.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 22.03.2023թ., փրվել է գրախոսության 30.03.2023թ., ընդունվել է փպագրության 07.04.2023թ.: